

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Եղվարդի Նեկտար ՍՊԸ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/01 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
47	Դոլե Պիկ ՍՊԸ	Բանան դեղնականաչավուն /ոչ խակ, ոչ շատ հասուն/, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների: Փաթեթավորման մակնշումը լինի ընթեռնելի: Անվտանգությունը փաթեթավորումը, մակնշումը և նույնականացումը՝ համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ N 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր: Սննդամթերքի

		մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանությունները շտկելու ժամկետ է սահմանվում 1 օրացուցային օր: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " Մատակարարման հստակ օրը կսահմանվի նախապես, պատվիրատուի կողմից, ոչ ուշ քան 3 օրացուցային օր առաջ՝ պահանջագրով, Էլեկտրոնային փոստով: Մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրով սահմանված օրը (երկուշաբթի կամ երեքշաբթի), ժամը 8:30-ից մինչև 16:30-ը: Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագիրը և բոլոր մթերքների սերտիֆիկատները ներկայացնել առաջին մատակարարման ժամանակ: Սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը:
--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Եղվարդի Նեկոսի ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЧУЛՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
47		